

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/5

14 ապրիլի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի դիմումը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի դիմումում բերված փաստարկները.

Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը հայտնում է, որ ք.Գյումրի, Գարեգին Նժդեհ 49-50 հասցեում իրականացնում է հագուստի մանրածախ առևտուր: 2016 թվականի դեկտեմբերի երեսունին առևտուր իրականացնելիս դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ հսկիչ-դրամարկղային մեքենա մուտքագրել է 18.000.000 դրամ: Սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո՝ օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո: Հետևաբար առկա չէ սխալ մուտքագրված գումարի ՀԴՄ կտրոնը: Այդ պատճառով Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը չի կարողացել հարկային տեսչություն ներկայացնել տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը:

Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը խնդրում է սխալ մուտքագրված գումարը չներառել իրացումից ստացված հասույթի ընդհանուր գումարի մեջ և չեղյալ համարել, քանի որ ձեռնարկատիրական գործունեության իրականացման օրվանից վերջին երեք տարիների ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները եռամսյակային կտրվածքով չի գերազանցել նույնիսկ 1.500.000 դրամը:

Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը 2016 թվականի չորրորդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկի առևտրական գործունեության եկամուտների մեջ չի ներառել սխալ մուտքագրված գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը խնդրում է սխալ մուտքագրված գումարը չներառել իրացումից ստացված հասույթի ընդհանուր գումարի մեջ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2016 թվականի դեկտեմբերի 30-ին Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի կողմից սխալմամբ հսկիչ-դրամարկղային մեքենա է մուտքագրվել 18.000.000 դրամ: Սակայն ՀԴՄ սխալմամբ ավել գումար մուտքագրված լինելու մասին Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը տեղեկացել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո: Ընդ որում, նրա մոտ չի պահպանվել սխալ մուտքագրված գումարի ՀԴՄ կտրոնը: Այդ իսկ պատճառով Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը չի կարողացել հարկային տեսչություն ներկայացնել տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»:

Քննարկվող դեպքում սխալ մուտքագրված գումարի վերաբերյալ ՀԴՄ կտրոնը պահպանված չլինելու հետևանքով Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանը չի կարողացել օգտվել ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգի դրույթներից:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի իրացման շրջանառության ծավալների, վաճառակետում առկա ապրանքային մնացորդի վերաբերյալ տեղեկատվությունը գտնում է, որ տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի կողմից նշված գումարը ՀԴՄ է մուտքագրվել թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարը, ըստ էության, չի կարող հիմք հանդիսանալ վերագրյալ գումարը Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

Ա/Ձ Հերմինե Փահլեվանյանի դիմումը՝ սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառությունից նվազեցնելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ